

15.07. 2020 թ.

ք. Գյումրի

ՀՀ ոստիկանության Շիրակի ՄԿ

ՈՐՈՇՈՒՄ Թիվ 720

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՒՄԱՅՐԻԻ ԲԱԺՆԻ ԹԻՎ 298 ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ՝ Սասուն Ժորայի Աբաղյանս, վերանայելով ՀՀ ոստիկանության Կումայրիի բաժնի պետի կողմից **28.04. 2020 թ.** կայացված թիվ **298** որոշումը, պարզեցի, որ.

Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, 110/140 տնակի բնակիչ՝ Սամվել Աշոտի Մուրադյանը

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 10-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին>> 2020 թվականի մայիսի 19-ի թիվ ՀՕ-265-Ն օրենքի 2-րդ հոդվածը և առաջնորդվելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 67-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վերանայել Սամվել Աշոտի Մուրադյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 10-րդ մասով կիրառված տույժը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով նշանակված տուգանքը, փոխարենը կիրառելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված տույժը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով տուգանքը (10.000 ՀՀ դրամ):

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է գանգադարկվել (բողոքարկվել) սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգադար կարող է փրվել որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝
Կ.Տ.

Ս. Ժ. ԱԲԱԴՅԱՆ

